# ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

**Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 5 հունվարի 2000 թ.:**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ամանորը շնորհավորելու նպատակով հունվարի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելեց Հայաստանում Հնդկաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Բալ Անանդը, որի դիվանագիտական առաքելության 100-րդ օրը Հայաստանում լրացավ վերջերս:

Զրույցի ընթացքում դեսպանը կարևորեց տարբեր կրոնների և ժողովուրդների համագործակցությունն ու համակեցությունը: Նա նշեց, որ Հնդկաստանն այն երկրներից է, որտեղ իրապես համերաշխաբար գոյակցում են տարբեր կրոններ ու Եկեղեցիներ: Դրանց թվում է նաև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, որի ներկայությունը Հնդկաստանում դարերի պատմություն ունի:

Ողջունելով պրն. Անանդի անդրանիկ այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետը նշեց, որ Հայ Եկեղեցին այսօր ևս կարևոր դեր ունի հնդկահայ կյանքի կազմակերպման գործում: Միաժամանակ իր գոհունակությունն արտահայտելով երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման առիթով՝ Նորին Սրբությունը վստահեցրեց, որ Հայ Եկեղեցին ըստ ամենայնի իր ներդրումը կբերի հայ-հնդկական դարավոր բարեկամության ամրապնդման գործին:

*ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ*